



### УРОК 10 ԴԱՍ 10

ЗВУК	БУКВА
[п]	Պ, պ
[т]	Տ, տ
[к]	Կ, կ

#### ГЛУХИЕ П,Т,К

Глухие [п], [т], [к] на письме обозначаются буквами պ, տ, կ. Эти согласные по произношению соответствуют русским твердым глухим звукам п, т, к и перед փ, ի почти не смягчаются.

1) Напишите прописные и строчные буквы Պ, պ, Տ, տ, Կ, կ.



2) Прочитайте и перепишите следующие слова, словосочетания и предложения:

- տատ [տատ] бабушка
- տետր [տէտր] тетрадь
- տա՛ր [տա՛ր] Отнеси!
- այս տետրը տա՛ր տուն [այս տէտրը տա՛ր տուն] Отнеси эту

тетрадь домой!  
տո՛ւր [ту՛ր] Дай!  
մատիտը տո՛ւր [матиты ту՛ր] Дай карандаш!  
պապ [пап] дед  
պատ [пат] стена  
պար [пар] танец  
պարել [парэл] танцевать  
նա [նա] է պարում [на лав э парум] Он (она) хорошо танцует.

կար [кар] шитье, шов  
կարել [карэл] шить  
կա [ка] есть имеется  
կար [кар] был, была, было  
կեր [кэр] пища  
կե՛ր [кэ՛ր] Ешь!  
կիրակի [кираки] воскресенье  
այս կիրակի [այс кираки] в это воскресенье  
նա գալիս է այս կիրակի [на галис э айс кираки] Он (она) приезжает в это воскресенье.

կիրակի օրը [кираки оры] в воскресенье  
նա գալիս է կիրակի օրը [на галис э кираки оры] Он (она) приезжает в воскресенье  
տեղ [тех] место  
արի՛ այստեղ [ари аистех] Иди сюда!

#### ВРЕМЯ ГЛАГОЛА – НАСТОЯЩЕЕ И ПРОШЕДШЕЕ НЕСОВЕРШЕННОЕ

Вы, вероятно, заметили, что настоящее время глагола в армянском языке имеет аналитическую форму, которая образуется сочетанием специальной формы – անկատար դերբայ - и вспомогательного глагола է в настоящем времени.

Запомните, что դերբայ – это неспрягаемая (неличная) форма глагола, которая на русский язык переводится причастием. В армянском языке 8 таких форм; некоторые из них не имеют самостоятельного употребления и

участвуют только в образовании временных форм. К ним относится անկատար դերբայ (несовершенное причастие), с помощью которого образуются, формы настоящего и прошедшего несовершенного времени изъявительного наклонения. Несовершенное причастие образуется прибавлением – ում к основе инфинитива, например:  
ասել-ասում, մտնո՞ւմ-մտնում

#### Образование инфинитива и несовершенного причастия

Причастие	основа	суффикс
Несовершенное причастие	ասում	ել
	խոսում	ել
	մտնում	ալ
	խաղում	ալ
Инфинитив	ասում	ում
	խոսում	ում
	մտնում	ում
	խաղում	ում

Формы настоящего времени образуются сочетанием несовершенного причастия и вспомогательного глагола в настоящем времени, а формы прошедшего несовершенного времени – сочетанием того же причастия и вспомогательного глагола է в прошедшем времени. Вспомогательный глагола է произносится с причастием слитно (ударение падает на последний слог причастия), например:

ասում էմ [асум эм] говорю –  
ասում էի [асум эйи] (я) говорил (а)  
գրում էմ [гырум эм] пишу –  
գրում էի [гырум эйи] (я) писал (а)

Посмотрите спряжения глаголов գրել – писать, в настоящем и прошедшем несовершенном времени.

#### Настоящее несовершенное время

Էմ. 4.  
գրում էմ  
գրում ես  
գրում է  
Մն. 4.  
գրում ենք  
գրում եք  
գրում են

#### Прошедшее несовершенное время

Էմ. 4.  
գրում էի  
գրում էիր  
գրում էր  
Մն. 4.  
գրում էինք  
գրում էիք  
գրում էին

Вы, конечно, заметили, что в этих временных формах не изменяется и передается значение действия в процессе, а значения лица, числа и времени передаются вспомогательным глаголом. Еще раз обращаем ваше внимание на то, что, в отличие от русского языка, в формах прошедших времен армянского глагола, в том числе и несовершенного, выражается значение лица. Помните, что вспомогательный глагол է, который обычно ставится после неспрягаемой глагольной формы, в предложении в зависимости от логического ударения может менять свое место и ставиться после логически выделяемого слова. При этом глагол переставляется только вперед, ср., например:  
ես գնում եմ տուն: [ес гынут эм тун] Я иду домой.  
Ե՛ս եմ տուն գնում: [ե՛с эм тун гынутум]  
Ե՛ս եմ գնում տուն: [ե՛с эм гынутум тун] Я՛ иду домой.  
ես տո՛ւմ եմ գնում: [ес ту՛н эм гынутум] Я домой иду.

Курс ведет  
Армине ОВСЕПЯН

### Գրական անկյուն

#### Ե՛կ, պանդուխտ եղբայր

Նորից իջնում է երեկոն դանդաղ.  
Նորից երկինքն է դառնում անպատան.  
Հանդը հագնում է մթին շամանդաղ.  
Ու հոգիս քեզ է թռչում, իմ ուսան:

Քամին փչում է , անպը հառաչում,  
Մութն է կլանում ձոր ու այգեստան  
Ճամփորդի վրա սև շունն է հաչում,  
Խեղճը պանդուխտ է, շունի սպաստան:

Ելնեմ, տուն կանչեմ բախտից ծեծվածին  
Ու հյուրն համարեմ օտարված իմ տան,  
Տերն էլ չի խղճում իր ստեղծածին,  
Մրից հանում է, գցում մրաստան...

Երբ հոտի հովիվը խորք է ու անհոգ,  
Ոչխարին կրժար ճահիճը բոստան,  
Բայց կկործանվի, չի փրկվի ոչ ոք  
Աշխարհն է դարձել վարկի գայլատան:

Եկ, պանդուխտ եղբայր, հիշենք մեր բույնը,  
Որ տառապել ենք, կերտել բուրաստան,  
Մեր հոգուն ծորենք հայրենյաց գույնը,  
Ու թևեր դեպի տուն՝ քաղցր Հայաստան:

#### Հայրենիք

Դռնից դենը տափաստանն է մշուշում,  
Եվ էլբրուսն է կովկաս լեռներից տանիք,  
Արագածն ու Մասիսներն են ինձ քաշում  
Կարոտում եմ և սիրում եմ քեզ, Հայրենիք:

Քեզից հեռու դեգերում եմ միայնակ  
Եվ դարձել եմ բախտի ձեռքին խաղալիք,  
Երևանը հոգուս փարուն է միակ  
Կարոտում եմ և սիրում քեզ, Հայրենիք:

Բազե դարձած ճախրում, եթերն եմ թևում,  
Որ գամ Սևան, դառնամ կոհակ ու ալիք,  
Ծիրակ հանդիս լապուր երկինքն եմ ձևում,  
Կարոտում եմ և սիրում քեզ, Հայրենիք:

Վերջացել է, չկա էլ հույս - հավատս,  
Բախտը միայն պարգևել է ինձ չարիք,  
Երանի թե կյանքով լցվեր գավաթս,  
Ու այդ կյանքս քեզ քաշիտեի, Հայրենիք:

Հրանտ Սարգսյան



## ԱՍՏԾՈՆ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

### 5 Պատվի՛ր քո հորն ու մորը, որպեսզի բարիք գտնես, երկար ապրես բարեբեր այն երկրի վրա, որ Տեր Աստված տալու է քեզ

Այս պատվիրանը մեզ սովորեցնում է սիրել և պատվել մեր ծնողներին: Աստծուց հետո մենք պետք է սիրենք մեր ծնողներին, որովհետև մեր աներևույթ հոգին Աստված է արարում, իսկ մեր երևելի մարմինը՝ մեր ծնողները, որի համար նրանք երկրորդ աստվածներ են կոչվում իրենց զավակների համար: Ոչ ոք չի կարող ամբողջապես վարձահատույց լինել իր ծնողներին ողջ կյանքի ընթացքում՝ նրանց չարչարանքների, հոգածության, պահպանության և սիրո փոխարեն: Հատկապես կարևոր է հոգ տանել ծնողների մասին, երբ նրանք ծերանում են և խնամքի ու հոգածության

կարիք գգում: Պետք է ամեն օր աղոթենք մեր ծնողների համար և ջանանք արժանանալ նրանց օրհնությանը, ինչպես Իսահակն արժանի եղավ Աբրահամի օրհնությանը, Հակոբը՝ Իսահակի, և նրանք աճեցին ու բարգավաճեցին: Ով սիրում է իր ծնողներին, նա սիրում է և՛ Աստծուն, և՛ իր բոլոր մերձավորներին, իսկ ով չի սիրում և չի հարգում իր ծնողներին, նա անարգում է և՛ Աստծուն, և՛ մարդկանց, որի պատճառով էլ կարժանանա անեծքի և պատժի, ինչպես Հակոբի որդի Ռուբենը և Նոյի որդի Զանանը: Ծնողների օրհնակով պետք է պատվել հոգևոր ծնողներին և ուսուցիչներին,

մարմնավոր առաջնորդներին և ղեկավարներին, ծերերին և տարեցներին:  
Այս պատվիրանը սովորեցնում է մեզ սիրել հայրենիքը, եկեղեցին, սրբությունները և հոգևոր ժառանգությունը: Պետք է մեծագույն հոգածությամբ վերաբերվել այն ամենին, ինչ ավանդել է մեր հայրերի կողմից. և ոչ միայն հարկ է զգուշությամբ պահպանել, այլ նաև հարստացնել և զարգացնել այն ավանդը, որպեսզի չմահանա քանքարը թաքցնող ծառայի (Մատթ. ԻԵ 14-30):  
Օրհնությամբ և աղոթքով՝ Տեր Անանիա քնն Բաբայան